Ուսուցիչների պարտադիր վերապատրաստում

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Հանդուրժողականությունը որպես մանկավարժի կոմպետենցիա

Դպրոց՝ Մուղնու Մ. Աշճյանի անվան հիմն. դպրոց

Ուսուցիչ՝ Ռուզաննա Հայրապետյան

2022թ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության արդիականությունը:

Ներկայումս մանկավարժական գործընթացի արդյունավետության համար անհրաժեշտ և կարևոր պայման է հանդիսանում կրթական գործընթացում աշակերտների սոցիալական, անհատական - հոգեբանական տարբերությունների ընդունումը:

Արդի հասարակության մեջ, որտեղ սթրեսը և մրցակցությունը գերակայում են, անհրաժեշտ է դառնում համագործակցության ակտիվացումը՝ հանդուրժողականության ուսուցչի կարևորագույն կոմպետենցիայի ձևավորման շնորհիվ: Ընդ որում, բացի «հանդուրժող ուսուցչի» մանկավարժական գործունեության հիմքում պետք է ընկած լինի, այլ ուսուցիչը այդ մշակույթը պետք է փոխանցի և դաստիարակի իր աշակերտներին հանդուրժողականության միջավայրում:

Փոխվել է կրթության կենտրոնական դեմքը՝ ուսուցչակենտրոնից մենք անցում ենք կատարել աշակերտակենտրոն ուսուցման և այստեղ շատ կարևոր է, որ ցանկացած ուսուցիչ հանդուրժող լինի: Նա պետք է գիտակցի, որ երեխան իր գործընկերն է և ոչ թե ինքն է ամբողջ գործընթացի հեղինակը, այլ համահեղինակն է:

Վերջին տաս տարիների ընթացքում ՄԱԿ-ի «Հանդուրժողականության սկզբունքների վերաբերյալ հռչակագրում» առանձնացվել է համաշխարհային այն կոնկրետ առկա փորձը, որը հնարավորություն կստեղծի ապագա սերունդի մոտ ձևավորել և դաստիարակել հանդուրժողականություն:

Հանդուրժողականության հակասականությունը նրանում է, որ մի կողմից անհատը կամ մարդը համակերպվում է հասարակության մեջ բարոյական կամ էթիկական նորմերի խախտման հետ, իսկ մյուս կողմից հանդուրժողականությունը նրանից պահանջում է հրաժարվել այդ երևույթի վրա ազդելու հնարավորությունից: Այս տեսակյունից հանդուրժողականությունը ոչ միանշանակ է ընդունվում իբրև արժեք և իդեալ, այն մշտապես պահանջում է փաստարկումների ամբողջություն:

«Ուսուցչի էթիկայի նորմեր» փաստաթղթում մի շարք սկզբունքների մեջ նշվում է նաև հանդուրժողականությունը, իբրև ուսուցչի անհրաժեշտ և պարտադիր վարքականոնի բաղադրատարր, իսկ Եվրոպական երկրների մանկավարժական հայեցակարգում առանձնացվում է ուսուցչի հանդուրժողականությունն իբրև մանկավարժական արժեք:

Հանդուրժողականության երևույթի առավել լայն սահմանումը տրված է Հանդուրժողականության սկզբունքների հռչակագրում (ստորագրվել է 1995 թ. նոյեմբերի 16-ին Փարիզում), իսկ ներկայումս նոյեմբերի 16-ը հռչակվել է ամենամյա միջազգային հանդուրժողականության օր, հասարակության ուշադրությունը հրավիրելու անհանդուրժողականության վտանգների վրա:

Հետազոտության նպատակը

Հանդուրժողականության՝ որպես ժամանակակից ուսուցչի մասնագիտական կոմպետենցիայի ուսումնասիրությունն ու ուսուցչի հանդուրժողականության մոդելի կառուցումն է:

Հետազոտության խնդիրներն են

1. Ուսումնասիրել «Հանդուրժողականություն» հասկացության էությունն ու մեկնաբանությունները

ժամանակակից գիտության մեջ:

2. Վերլուծել հանդուրժողականության բաղադրատարրերը՝ որպես ուսուցչի մասնագիտական

կոմպետենցիա:

3. Մշակել« «Ուսուցչի հանդուրժողականության» մոդել:

Հանդուրժողականություն հասկացության էությունը և կառուցվածքը

XX դարի երկրորդ կեսի և 21-րդ դարի սկզբի հանդուրժողականության խնդիրը միջազգային բնույթ է կրում, քանի որ դրա դրական լուծումը թույլ է տալիս մեզ բացատրել բազմաթիվ միջազգային և ներպետական հակամարտությունների պատճառները: Հակամարտող կողմերի երկխոսության մեջ փոխզիջումների հասնելը անհնար է առանց փոխադարձ հանդուրժողականության

Լատիներեն «toleranten» բառը դարձավ հանդուրժողականություն հասկացության համար սկիզբ, նշանակում է կայունություն:

Մանկավարժության մեջ հանդուրժողականությունը համարվում է ոչ բռնության հիմք՝ որպես համամարդկային սկզբունք մարդու՝ շրջակա աշխարհի և այլ մարդկանց հետ հարաբերությունների կարգավորման մեխանիզմ:

Մանկավարժական հաղորդակցման տակ հասկացվում է մանկավարժի և սովորողների կոլեկտիվի փոխազդեցության հնարների և ունակությունների համակարգը, որի բովանդակությունն են կազմում ինֆորմացիայի փոխանակությունը, փոխընբռման, կազմակերպման ուսումնադաստիրակչական ներգործության ցուցաբերումը: Մանկավարժը հանդես է գալիս որպես այդ պրոցեսի ինդիկատոր, կազմակերպում և ղեկավարում է այն: Մանկավարժը առաջին հերթին գործ ունի հասարակության ամենախոցելի խմբի՝ մանուկների հետ: Եվ այստեղ կարևոր է ոչ միայն նրա մասնագիտական հմտությունները ու գիտելիքները, այլև հաղորդակցման և հանդուրժողականության ունակությունները:

Յուրաքանչյուր ուսուցիչ գիտի, որ երեխան անհատ է անկախ բոլոր հանգամանքներից մարդ էակ, հեշտ խոցելի: Յուրաքանչյուրին պետք է վերաբերվել որպես անհատականությունների, օգնել և խրախուսել:

Մանկավարժը պետք է հասկանա աշակերտի ներաշխարհը: Միայն աշակերտին ընդունելով է, որ մանկավարժը կարողանում է նրան հասկանալ: Սա ազատում է անհարկի վախից, վրդովմունքից, վշտից, զայրույթից, կանխարգելում է հարաբերություններում հոգեբանական լարվածությունը: Փոխադարձ ընդունումը բացում է ազատ դրսևորումներ: Աշակերտը այլևս չի վախենում, որ իրեն սխալ

կհասկանան, որ իր վրա կծիծաղեն, որ անզգույշ արտահայտությամբ նա կկորցնի իր հեղինակությունը, և հենց այդ ժամանակ նա դառնում է շրջապատի համար հետաքրքիր, որովհետև նրա սեփական «Ես»-ը ազատ արտահայտվելու ժամանակ դառնում է արժեքավոր։ Նա սկսում է իրեն հարմարավետ և վստահ զգալ և իրեն պահում է արժանապատիվ կերպով, նրա ինքնագնահատականը և ինքնադաստիարակությունը բարձրանում են, ինչն էլ ստեղծում է նպաստավոր հոգեբանական պայմաններ նրա ուսման և սոցիալիզացիայի համար։

Հանդուրժողականության ձևավորումը որպես ապագա մանկավարժի մասնագիտական կոմպետենցիա

Մենք ապրում ենք թվային դարաշրջանում, որը փոխում է կյանքի և տնտեսության բոլոր ասպեկտները։Մարդկանց, կազմակերպությունների և երկրների միջև ընկած նյութական, մտավոր և տեխնոլոգիական բացը մեծանում է։ Ժամանակակից մասնագիտական կրթության համակարգը հիմնվում է կոմպետենտային մոտեցման վրա։ Մանկավարժական գիտության մեջ և մասնագիտական կրթության ոլորտում մեծ տարածում և կիրառություն են գտել « «մասնագիտական կոմպետենտություն» և «մանկավարժական կոմպետենցիան» հասկացությունները։

Կոմպետենտություն (կարողունակություն) հասկացությունն ունի լատինական ծագում competo նշանակում է հասնում եմ, ձգտում եմ համապատասխանում եմ։ Ս. . Օժեգովի բառարանում կոմպետենտը մեկնաբանվում է որպես «որևէ ոլորտում գիտակ», բանիմաց տեղեկացված, իսկ կոմպետենցիան՝ հարցերի ամբողջություն, որոնցում ինչ -որ մեկը լավ տեղեկացված է։ Կոմպետենտությունը (компетентность) գործունեության սուբյեկտի ձեռքբերումն է, որը ենթադրում է համապիտանի (ունիվերսալ) գիտելիքների, կարողությունների, հմտությունների, ընդունակությունների և անձնային որակների դրսևորում։ Կոմպետենտությունը կոնկրետ անձի կողմից կոմպետենցիաների համակարգի (компетенции) յուրացումն է։ Իսկ կոմպետենցիան (компетенции) սովորողի՝ գործունեության ընթացքում առարկայացված կոմպետենտությունն է, գիտելիքների, կարողությունների, անձնային որակների, գործնական

փորձառության համակարգը, որն էլ որոշում է անձի՝ գործունեությանը պատրաստ լինելը:

Կոմպետենտությունը ներկայանում է որպես մանկավարժական գործունեության ընթացքում հանդուրժողություն ցուցաբերած մասնագիտական և անձնային բաղադրիչների ամբողջություն՝ անձնային որակների գերակայությամբ: Անձնային որակների շարքում նշվում են ինքնուրույնությունը, հաղորդակցվելու ունակությունը, ճշտապահությունը, ինքնազարգացման ձգտումը, որոշակի աշխատանքային պայմաններում հարմարվելու-հանդուրժելու կարողությունը:

Մասնագիտական կոմպետենտությունը առաջարկում է նրա բաղադրամասերի հետևյալ դասակարգումը.

- մասնագիտական գիտելիքների, կարողությունների և հմտությունների համակարգ,
- մասնագիտական խնդիրներն ինքնուրույն ստեղծագործական լուծելու ձգտում և ունակություն,
- մարդկանց հետ աշխատելու, համագործակցելու հոգեբանական և սոցիալ-հոգեբանական պատրաստություն,

Մասնագիտական - մանկավարժական կոմպետենտության բաղադրամասերն են.

- Ոչ միայն հարուստ և լայն առարկայական գիտելիքներ, այլ նաև տեսական գիտելիքներ մանկավարժությունից, հոգեբանությունից և այլ գիտություններից,
- սովորողների և գործընկերների հետ հաղորդակցվելու և համագործակցելու կարողություններ և ունակություններ,
- դիմացինին գնահատելու, արժևորելու ունակություններ,

Առանձնացվում է ուսուցչի մասնագիտական հետևյալ առանցքային կոմպետենցիաները՝

- առարկայական-մեթոդական,
- հոգեբանամանկավարժական,
- ճանաչողական,
- սոցիալ-մշակութային,
- հաղորդակցական,

- տեղեկատվական-տեխնոլոգիական,
- խոսքային-լեզվական այլն:

Վերլուծելով ուսուցիչների հանդուրժողականության առանձնահատկությունները մանկավարժական գործընթացում, Յ. Պ. Պովարենկովը առանձնացնում է ուսուցիչների հանդուրժողականության երկու տեսակ՝ սոցիալական և հոգեբանական: Սոցիալական հանդուրժողականության առկայությունը թույլ է տալիս ուսուցիչին արդյունավետորեն համագործակցել կրթական գործընթացի բոլոր մասնակիցների հետ, իսկ հոգեբանական հանդուրժողականության առկայությունը ապահովում է բազմաթիվ պրոֆեսիոնալ սթրեսների նկատմամբ ուսուցիչների բարձր կայունություն և նպաստում է մասնագիտական կարիերայի արդյունավետ կառուցմանը:

Մասնագիտական մանկավարժական կոմպետենցիաները առանձնացվում են ըստ հետևյալ խմբերի

Իմացական-ճանաչողական՝

- կարողանալ օգտվել ուսումնամեթոդական և գիտական տեղեկատվությունից, ունենալ տեխնոլոգիական գրագիտություն, քննադատաբար վերաբերվել տեղեկատվությանը, համակարգել և նպատակային կիրառել այն ըստ նպատակների
- ուսումնասիրել ծրագրային և ուսումնամեթոդական նյութերը, առարկայական չափորոշիչները, գիտակցել տվյալ ուսումնական առարկայի, թեմայի նպատակները
- տիրապետել սովորողների տարիքային, հոգեբանական և անհատական առանձնահատկություններին
- գիտակցել գործունեության ուժեղ և թույլ կողմերը, վերլուծել և անաչառ գնահատել իր վարած դասերը, հիմնավորել արժանիքներն ու թերությունները, մեկնաբանել կիրառված մեթոդների ու ձևերի ընտրությունը

Առարկայական - մեթոդական՝

- նախագծել ու պլանավորել ուսումնական պարապմունքը, գրել դասի համառոտ և ծավալուն պլան-կոնսպեկտ,

- սահմանել ուսումնական խնդիրներն ու նպատակները, որոշել ուսումնասիրվող նյութի տեղն ու նշանակությունն ուսումնական դասընթացում
- ապահովել դասի առանձին փուլերի միջև հաջորդականությունն ու դասի տրամաբանական ամբողջականությունը, տնօրինել ուսումնական ժամանակահատվածը, տիրապետել անհատական, զույգերով, խմբային աշխատանքի կազմակերպման հմտություններին

Կազմակերպչական՝

- սովորողներին ներկայացնել կարգապահական բնույթի պահանջներ,
- վերահսկել հանձնարարված աշխատանքի կատարման ընթացքը, հետևողական լինել, կարողանալ ապահովել սովորողների ուշադրությունը, այն խթանել հարցերի, լրացուցիչ առաջադրանքների, ուղղումների, տեղին դիտողությունների միջոցով, ուղղումներ և դիտողություններ կատարել ընտրելով մանկավարժական համարժեք ձևեր՝ խրախուսանք, նկատողություն, գնահատում, պատիժ և այլն
- կողմնորոշվել ըստ իրավիճակի, ճկուն, արագ գնահատել բախումնային, անկանխատեսելի իրավիճակները, ընդունել ճիշտ որոշումներ
- սովորողներին ներգրավել բանավեճի, դերախաղերի մեջ, կարողանալ բաշխել նրանց պարտականությունները:

Հաղորդակցական՝

- տիրապետել հաղորդակցման միջոցների, աշակերտական կոլեկտիվում ձևավորել բարենպաստ փոխհարաբերություններ
- համարժեք արձագանքել սովորողների վարքային դրսևորումներին, կողմնորոշվել մանկավարժական իրավիճակներում և համարժեք գնահատել, աշակերտներին աջակցել անձնական խնդիրներիում
- յուրացնել խոսքի տեխնիկայի հմտություններ (շնչառություն, ձայն, առոգանություն, ձայնի հնչերանգ, խոսքի տեմպ, ռիթմ և այլն), հաղթահարել անվստահությունը, վախը, լարվածությունը, կաշկանդվածությունը
- տիրապետել ուսուցչի կերպարին հարիր պահվածքին, կեցվածքին, միմիկային, շարժումներին, արտաքին տեսքի գեղագիտական արտահայտչականությանը:

Մանկավարժական գործունեության հաջողության համար անհրաժեշտ պայմանը երեխայի ընդունումն է, ինչպիսին որ նա կա: Հանդուրժող ուսուցիչը, երեխաների նկատմամբ հատուկ մարտավարության շնորհիվ իր վարքագիծը ձևավորելու միջոցով, ավելի մեծ արդյունավետություն է ստանում: Հասարակության զարգացման ժամանակակից պայմանները ուսուցչի համար նոր պահանջներ են առաջ բերում, ինչը նախատեսում է մանկավարժական հանդուրժողականության ձևավորում :

Մանկավարժական հանդուրժողականություն ասելով պետք է հասկանալ՝ որպես կրթական գործընթացի բոլոր սուբյեկտների հետ հանդուրժողական փոխհարաբերությունների կառուցում և հմտությունների տիրապետում: Հանդուրժողականության հմտությունները՝ իբրև կրթված անձի հատկանիշներ, նպաստում են ցանկացած գիտելիքի ազատ յուրացմանը, զբաղմունքների և առանց կոնֆլիկտների, ցանկացած հաղորդակցության խաղաղ մասնակցությանը: Հանդուրժողականության սկզբունքների ձևավորմանը նպաստող հասարակական ինստիտուտներից մեկը կրթությունն է, որտեղ կրթական գործընթացի բոլոր սուբյեկտների միջև արդյունավետ համագործակցության համար օգտագործվում են երկխոսությունը, համագործակցությունը և հարգանքը :

Անհանդուրժողությունը կանխարգելող ամենաարդյունավետ միջոցը դաստիարակությունն է: Դաստիարակությունը սկսվում է մարդկանց կրթելուց, նրանց՝ իրենց իրավունքների և ազատությունների մասին տեղեկացնելու միջոցով, ինչը կապահովի այդ իրավունքների իրագործումը և կամրապնդի այլ մարդկանց իրավունքների պաշտպանության ձգտումը: Դաստիարակությունը հանդուրժողության ոգով պետք է ուղղված լինի ընդդեմ այն ազդեցությունների, որոնք հանգեցնում են այլ մարդկանց հանդեպ վախի և օտարման զգացողության:

Ստորև, գծապատկերի միջոցով, ներկայացնում ենք անհանդուրժողականության դրսևորումները:

Գծապատկեր 1.



Մանկավարժական հանդուրժողականությունը համբերատար վերաբերմունք է սեփական երեխաների, աշակերտների նկատմամբ, ունակություն է հասկանալու և ներելու նրանց ոչ կատարյալ լինելը: Այս մոտեցումը պետք է լինի բոլոր և յուրաքանչյուր աշակերտի համար անխտիր:

Այսպիսով կարող ենք ասել, որ ուսուցիչը պետք է լինի մասնագետ, լինելով հանդուրժող աշակերտների նկատմամբ նա չպետք է զիջի իր մասնագիտական կերպարը, չափից ավել բարի գտնվի աշակերտների նկատմամբ: Հանդուրժող

ուսուցիչները կարողանում են սերմանել աշակերտների մոտ այնպիսի արժեքներ ինչպիսիք են՝ մարդասիրությունը, հոգատարությունը, սերը, օգնելու ցանկությունը: Աշակերտները հեշտությամբ են կարողանում կապ հաստատել տարիքային այլ երեխաների հետ: Հանդուրժող երեխաներն ավելի մտերիմ են և ընկերասեր: Չպետք է խառնել հանդուրժողականությունը թուլության հետ: Հանդուրժել չի նշանակում լինել թույլ, կամ կատարել այլոց ցանկությունները անվերապահորեն:

Այսպիսով, ուսուցչի մանկավարժական գործունեության ընթացքում հանդուրժողականության դրսևորման հոգեբանական վերլուծությունը վկայում է այն մասին, որ այն համարվում է ուսուցչի անձի մասնագիտական կարևոր որակ և ազդում է նրա աշխատանքի արդյունավետության, ինչպես նաև կրթական գործընթացի բոլոր սուբյեկտների հետ փոխհարաբերությունների վրա:

Յուրաքանչյուր մարդ հանդուրժողականությունը պետք է կրի իր մեջ և մասն դարձնի իր բարոյական կերպարին:

Վերը նշվածից կարելի է ասել, որ հանդուրժողականություն և համբերատարություն բառերը հոմանիշներ են:

Ժամանակակից մարդը ոչ միայն կրթված անձն է, այլև անձ, որը հարգում է ինքն իրեն և հարգված է ուրիշների կողմից: Այդ իսկ պատճառով, ամենակարևոր խնդիրը երիտասարդ սերնդի մոտ շրջապատող մարդկանց հետ փոխհամագործակցության ընթացքում հարաբերություններ կառուցելու ունակության ձևավորումն է, համագործակցության և փոխըմբռնման հիման վրա, պատրաստակամություն ընդունելու այլ մարդկանց, նրանց տեսակետները, սովորույթները և սովորությունները, այնպիսին, ինչպիսին նրանք կան:

Տարրական դպրոցը անձի ձևավորման և զարգացման դպրոց է, և ուսուցչի գերխնդիրն է ոչ թե մայրենի լեզվից և մաթեմատիկայից համակարգված գիտելիքների հաղորդումը, այլ ինքնաճանաչման, ինքնադրսևորման, նրանց մտածողությունն ու խոսքը զարգացնող, անձնային բարձրարժեք որակներ ձևավորող և ապագա ուսումնական գործունեության համար պատրաստ անձ ձևավորելու համար անհրաժեշտ միջավայր ստեղծելն է:

Հանդուրժող ուսուցիչները կարողանում են սերմանել աշակերտների մոտ այնպիսի արժեքներ ինչպիսիք են՝ մարդասիրությունը, հոգատարությունը, սերը, այլակարծությունը, օգնելու ցանկությունը:

Բարությունը ուսուցիչի հանդուրժողականության առաջատար ուղղորդիչներից է: Երեխան գնում է դպրոց, ուսուցչի նկատմամբ անսահման վստահությամբ և ուրախությամբ: Ցավալի է, եթե ուսուցիչին հասանելի չեն երեխայի ուրախության և սեփական անձի նկատմամբ վստահության հանդեպ պատասխանատվության զգացմունքները: Ուրախության, վստահության, ջանքերի կրակը հեշտությամբ մարվում է կոշտ խոսքով, երեխայի կարծիքը, տեսակետը չընդունելով, անտարբեր ժեստով: Երեխաները հիանալի զգում են մեծահասակների բարությունը: Եվ հաճախ լինում է այնպես, որ չարացած աշակերտը աստիճանաբար բարի է դառնում, եթե նա գտնվում է բարության, սիրո, փոխըմբռնման և հարգանքի մթնոլորտում:

Պետք է նշենք նաև, որ հանդուրժող ուսուցիչը դաստիարակում է հանդուրժող աշակերտներ: Հանդուրժող ուսուցիչը լավատես է, կյանքը սիրող, բարի, կենսուրախ, անկախ և իրատեսական, ունի պատասխանատվության զգացում, ցույց չի տալիս չափից ավելի վստահություն կամ կասկած, հարգում է ուրիշների կարծիքները, օգտագործում է համապատասխան հմտություններ երկխոսության միջոցով հակամարտությունների խաղաղ կարգավորման համար: Նպաստում է աշակերտների և ծնողների ներգրավմանը որոշումների կայացմանը և համատեղ գործողությունների ծրագրերի մշակմանը:

Հանդուրժող ուսուցիչների աշակերտները տարբերվում են անհանդուրժող ուսուցիչների աշակերտներից: Նրանք հետաքրքրասեր են, ուրախ, ակտիվ, անկախ, համակրելի, վստահելի, ուշադիր և բարեհոգի:

Գծապատկեր 2.



Այս գծապատկերը համառոտ ներկայացնում է ժամանակակից պայմաններում աշխատող ուսուցչի հանդուրժողականության մոդելը:

Այսպիսով, հանդուրժողական անձի դաստիարակությունը իրականացվում է՝ ընտանիքում, դպրոցում, այլ կրթական և արտադպրոցական հաստատություններում: Անձի դաստիարակության գործընթացին նպաստում են երիտասարդական սոցիալական ծառայությունները, հասարակական (ազգային և մշակութային հասարակությունները և միությունները, ոչ պետական հասարակական կազմակերպությունները, տարբեր հիմնադրամները), կրոնական

կազմակերպությունները, պետական մարմինները (տեղական և կենտրոնական) և, վերջապես, համաշխարհային հանրությունը (միջազգային կազմակերպությունները և հիմնադրամները) :

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Տարբեր գիտությունների համակարգում <<Հանդուրժողականություն>> հասկացության վերլուծության արդյունքում եզրահանգեցինք, որ կան տարբեր մեկնաբանություններ և վերլուծություններ դրա վերաբերյալ, համաձայն որի հանդուրժողականությունը դիտարկվում է որպես ուրիշների վարքի մոդելների, համոզմունքների և արժեքների հանդեպ ազատական ընդունման դիրքորոշում:

2. Մանկավարժական հանդուրժողականությունն իբրև ուսուցչի մասնագիտական կոմպետենցիա դրսևորվում է նրա մանկավարժական գործունեության մեջ՝ դիտարկվելով որպես ուսուցչի վարքականոնի պարտադիր բաղադրատարր, հիմնարար սկզբունքներից մեկը, այսինքն այն գտնվում է ուսուցչի մասնագիտական կոմպետենտության կենտրոնում և դրանով է պայմանավորված ժամանակակից ուսուցչի հանդուժող վարքագծի ձևավորումը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1 Ալեքսանյան Լ., Ֆ. Մանկավարժություն գիտամեթոդական ամսագիր N 7, 2012թ.:

1 Ամիրջանյան Յու. Ա., Սահակյան Ա. Ս. Մանկավարժություն ուսումնական ձեռնարկ, Մանկավարժ 2005թ. :

2 Աստվածատրյան Մ., Ավագյան Մ., Թերզյան Գ. Մանկավարժական կրթության մասնագիտական զարգացման հայեցակարգը, Երևան 2014թ. :

3 Հակոբյան Ս., Զոհրաբյան Ա., Պետրոսյան Ս. ՈՒսուցչի էթիկայի նորմեր Երևան Տիգրան Մեծ 2014թ. :

4 Վարդումյան Ս. Տ. Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, քսաներորդ դարի մանկավարժական տեսություններ. ձեռնարկ մանկավարժների և ուսանողների համար, Երևան Նոյյան տապան 2005թ. :